

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 7-ի N 2107-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՄԱՂԲԻ, ԹՌՉՆԱՂԲԻ
ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆԸ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆԸ,
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ԵՎ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պահանջներով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գոմաղբի, թռչնաղբի պահեստավորման, տեղափոխման, վերամշակման, օգտագործման և վարակազերծման հետ կապված հարաբերությունները:

2. Գոմաղբը, թռչնաղբը գյուղատնտեսական կենդանիների պահման ընթացքում գոյացող թափոններ են:

3. Գոմաղբի, թռչնաղբի տեղափոխումը, վերամշակումը, պահեստավորումը և վարակազերծումն իրականացվում են շրջակա միջավայրն աղտոտումից պահպանելու, մարդկանց և կենդանիների առողջությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով:

4. Որոշման մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) *գոմաղբ, թռչնաղբ՝* գյուղատնտեսական կենդանիների պահման ընթացքում գոյացած անասնապահական կողմնակի արտադրանք.

2) *գոմաղբի, թռչնաղբի պահեստավորման, վերամշակման արտադրամաս՝* հատուկ սարքավորումներով հագեցած տարածքներ, պահեստավորման և պահպանման համար նախատեսված վայրեր.

3) *գոմաղբի, թռչնաղբի վերամշակում՝* մասնագիտացված տեղամասերում գոմաղբից, թռչնաղբից տեխնիկական հումքի պատրաստում դրանց օգտագործման կամ իրացման համար.

4) *գոմաղբի, թռչնաղբի օգտագործում՝* վերամշակված գոմաղբի, թռչնաղբի օգտագործումը գյուղատնտեսական հողերի բերրիությունը բարձրացնելու, վառելիք՝

կենսագագ կամ վառելանյութ ստանալու համար:

5. Պահեստավորման, վերամշակման արտադրամասը, ինչպես նաև պահպանման համար նախատեսված վայրերը պետք է ունենան գոմադրի, թռչնադրի կարանտինային տարածքներ:

6. Կենդանիների և թռչունների պահման շենքերում գոմադրը, թռչնադրը և դրանք պարունակող կեղտաջրերը հավաքելու և հեռացնելու սարքերի նախագծման կանոնները տրվում են տեխնոլոգիական նախագծման համապատասխան նորմերով (տեխնոլոգիական նախագծման մեթոդական հանձնարարականներով):

7. Անասնաբուժական և թռչնաբուժական շենքերը պետք է նախագծվեն այնպես, որ գոմադրը, թռչնադրը, գոմադր և թռչնադր պարունակող արտահոսքերը չաղտոտեն շրջակա միջավայրը և ստորերկրյա ջրերը, ապահովեն մակերևութային ջրերի և արտադրական կեղտաջրերի հեռացման և մաքրման պայմանները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 8-ի N 16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 շինարարական նորմերի պահանջների:

2. ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

8. Գոմադրը, թռչնադրը պահեստավորելիս պետք է հաշվի առնել պահպանման եղանակները:

9. Գոմադրի, թռչնադրի պահպանման եղանակներն են՝

1) փխրուն՝ ազատ շարվածքով, 2-3 մետրից ոչ ավելի լայն կույտերով.

2) խիտ՝ խիտ շարվածքով, առնվազն 5 մետր լայնությամբ և 2 մետր բարձրությամբ.

3) սեղմված՝ յուրաքանչյուր շերտը 0.8-1 մետր, բրգաձև շարվածքով, առնվազն 2 մետր բարձրությամբ.

4) հեղուկ, կիսահեղուկ՝ կուտակվում և պահվում են հատուկ սեկցիոն տիպի պահեստարաններում:

10. Գոմադրի, թռչնադրի պահեստավորման լավագույն եղանակ է համար-

վում խիտ եղանակով պահպանումը, որի ժամանակ կրճատվում է ազոտի և օրգանական նյութերի կորուստը: Գոմաղբի, թռչնաղբի պահեստարանները պետք է ապահովված լինեն դրանք խառնելու սարքերով:

11. Գոմաղբի, թռչնաղբի պահեստավորման օբյեկտների տարածքը պետք է լինի բարեկարգված և շրջապատված լինի բազմամյա կանաչ տնկարկներով՝ հնարավորինս կանխելով գարշահոտության տարածումը:

12. Պահեստի հատակը, պատերը և մուտքի ճանապարհները պետք է ունենան կարծր մակերես: Գոմաղբի փակ պահեստարանները պետք է ունենան օդանցքեր և օդափոխության համակարգեր:

13. Գոմաղբի, թռչնաղբի պահեստավորման տարածքի հզորությունը հաշվարկվում է գոմաղբի օրական ստացվող քանակից և դրա օգտագործման ժամանակից: Թույլատրվում է պահեստավորել 6 ամիս ժամկետով, դրանից ավելի պահելու դեպքում՝ հիմնավորել:

14. Գոմաղբի, թռչնաղբի հավաքման և սենքից դուրս տեղափոխման համակարգը պետք է ապահովի կենդանիների և թռչունների պահման համար նախատեսված սենքերի, միջանցքների և ցանկապատերի մաքրությունը:

15. Գոմաղբի, թռչնաղբի հեռացման առուների (ջրանցքների) կոնստրուկտիվ լուծումները՝ լայնությունը, խորությունը, ուղղահայացի նկատմամբ կողային պատերի թեքության անկյունը, գոմաղբի, թռչնաղբի հեռացման տարրեր եղանակների դեպքում առուների հատակի թեքությունը տրվում են գոմաղբի և թռչնաղբի հեռացման համակարգի տեխնոլոգիական նախագծման մեթոդական ցուցումներով:

16. Անասնապահական շենք/շինություններից գոմաղբի և թռչնաղբի հեռացումն իրականացվում է մեխանիկական, հիդրավլիկ (հիդրավլիկ լվացման, ինքնահոս համակարգեր), օդաճնշական եղանակով, քերիչ և թրթուրավոր փոխադրիչ սարքավորումներով: Հավաքված գոմաղբի, թռչնաղբի արտադրանքի տեղափոխումը պահպանման վայրեր իրականացվում է բեռնատարներով, որոնց թափքերը պետք է լինեն ջրամեկուսացված և ծածկված լինեն անջրաթափանց նյութից պատրաստված ծածկով:

17. Գոմաղբը, թռչնաղբը մինչև խմորումը պահվում են 24-48 ժամ:

3. ԳՈՄԱՂԲԻ, ԹՌՉՆԱՂԲԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

18. Գոմաղբի, թռչնաղբի վերամշակումն իրականացվում է տեխնոլոգիական գործողություններով, և արդյունքում ստացվում է հումքային ռեսուրս օգտագործման համար:

19. Տնտեսությունում վարակիչ հիվանդության արձանագրման դեպքում՝ չվերամշակված գոմաղբը կամ թռչնաղբը հանդիսանում է վարակիչ հիվանդությունների տարածման աղբյուր:

20. Գոմաղբի, թռչնաղբի վերամշակման արտադրամասը պետք է տեղակայված լինի անասնապահական շենք/շինությունների ցանկապատից դուրս:

21. Գոմաղբի, թռչնաղբի վերամշակման արտադրամասի հեռավորությանը ներկայացվող պահանջները սահմանված են համաձայն աղյուսակի.

Տնտեսությունն ըստ կենդանատեսակի և գլխաքանակի	Անասնաբուժական տնտեսությունների հեռավորությունը /մետր/	Բնակելի տարածքներից հեռավորությունը /մետր/
Գոմաղբի մեխանիկական և կենսաքանակային վերամշակում		
խոզաբուծարան՝ մինչև 10000 գլուխ	առնվազն 60	առնվազն 500
խոշոր եղջերավոր կենդանիների տնտեսություն՝ մինչև 1000 գլուխ	առնվազն 60	առնվազն 500
մանր եղջերավոր կենդանիների տնտեսություն՝ մինչև 5000 գլուխ	առնվազն 200	առնվազն 3000
մինչև 50 գլխաքանակ ունեցող տնտեսություններ	առնվազն 5	առնվազն 100
Թռչնաղբի վերամշակումը պահեստներում		
թռչնաֆարրիկա	առնվազն 500	առնվազն 1000

22. Յուրաքանչյուր անասնապահական շենք/շինություն պետք է ունենա գոմաղբի, թռչնաղբի ախտահանման մեթոդ և տեխնիկական միջոցներ:

23. Գոմաղբի, թռչնաղբի օգտագործման համար անասնապահական շենք/շինությունները պետք է ապահովված լինեն կարանտինային վայրերով:

24. Գոմաղբը, թռչնաղբը կարանտինային վայրերում պետք է պահվեն առնվազն 6 օր, անասնահամաճարակային իրավիճակների դեպքում՝ դեպքի արձանագրման

օրվանից առնվազն 45 օր:

25. Գոմաղբի, թռչնաղբի վերամշակման մեթոդներն են՝

1) *մեխանիկական*.

ա. կոմպոստավորման մեթոդ՝ բնական ճանապարհով միկրո (բակտերիաներ, սնկեր և այլն) և մակրոօրգանիզմների (միջատներ, ճիճուներ) ազդեցության տակ խմորում, տարբեր օրգանական նյութերի տարրալուծում, գոմաղբի, թռչնաղբի առավելագույն խոնավությունը 75 %,

բ. արագացված կոմպոստավորման տեխնոլոգիական մեթոդ՝ ապահովել օդի ներթափանցումը (աերոբ),

գ. չորացման մեթոդ՝ իրականացվում է հատուկ սարքի միջոցով, որն արագացնում է վարակազերծումը և խմորումը.

2) *կենսաբանական*.

ա. կենսաբանական մեթոդ՝ միկրոօրգանիզմներով հարստացում,

բ. կենսազգալի արտադրության մեթոդ՝ հատուկ տեխնոլոգիական պայմանների և պահանջների առկայություն:

26. Անասնապահական շենք/շինություններից հեղուկ գոմաղբի, թռչնաղբի հեռացման, շրջանառության՝ վերամշակման, պահպանման և տեղափոխման, համակարգի բոլոր կառույցներն ու շինարարական տարրերը պետք է կատարվեն ջրամեկուսացումով, ինչը բացառում է ստորերկրյա ջրերի ներթափանցումը տեխնոլոգիական գիծ, ինչպես նաև հեղուկ գոմաղբի և արտահոսքի ներթափանցումը ջրատար հորիզոններ:

27. Գոմաղբի, թռչնաղբի վերամշակման և պահպանման վայրերի տարածքը պետք է լինի պարսպապատված, բարեկարգված և ունենա ասֆալտապատ ճանապարհ՝ նվազագույնը 3,5 մետր լայնությամբ:

28. Վերամշակված գոմաղբը, թռչնաղբն օգտագործվում են որպես գյուղատնտեսական հողերի բերրիությունը բարձրացնելու միջոց՝ օրգանական ծագման պարարտանյութ, վառելիք կամ վառելանյութ:

4. ԳՈՄԱՂԲԻ, ԹՌՉՆԱՂԲԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄԸ

29. Անասնապահական տնտեսությունում վարակիչ հիվանդության արձանագրման դեպքում, իրականացված կանխարգելիչ միջոցառումների շարքում է նաև գոմաղբի, թռչնաղբի վարակազերծումը:

30. Անասնապահությանը զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք, «Անասնաբուժության մասին» օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, պարտավոր են՝

1) ֆերման սպասարկող անասնաբուժական ծառայությանը և (կամ) լիազոր մարմնին տեղեկացնել կենդանիների առողջական վիճակի վերաբերյալ փոփոխությունների, հիվանդացության, իրականացրած սանիտարական սպանդի, կենդանիների մորթի և անկած կենդանիների մասին.

2) կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և ոչնչացման միջոցառումների իրականացման շրջանակներում կատարել ներգրավված անասնաբույժների ցուցումները, լիազոր մարմնի հանձնարարությունները, կարգադրությունները:

31. Տնտեսությունը պետք է հազեցած լինի համապատասխան տեխնիկական միջոցներով և նյութերով՝ վարակազերծումն իրականացնելու համար:

32. Գոմաղբի վարակազերծման եղանակներն են՝

1) կենսաբանական՝ բիոթերմիկ, կոմպոստավորում, ակտոբ խմորում, պահպանում մինչև 12 ամիս.

2) քիմիական՝ ամոնիակով, ֆորմալինով (40%), քլորով: Այս նպատակով 3 կգ ֆորմալդեհիդը խառնվում է 1 մ³ հեղուկ գոմաղբին՝ պահվում 5 օր, 30 կգ ամոնիակը՝ 1 մ³ հեղուկ գոմաղբին և պահվում 3 օր.

3) ֆիզիկական՝ ջերմային (110-120⁰-ի ջրային գոլորշու շիթով, 0,2 կՊա ճնշմամբ՝ 10 րոպե տևողությամբ), չորացում, ուժեղացված կոմպոստավորում՝ ինտենսիվ օդափոխությամբ:

33. Թռչնաղբի վարակազերծման եղանակներն են՝

1) կենսաբանական՝ կոմպոստավորում, պահպանում մինչև 12 ամիս.

2) ֆիզիկական՝ չորացում:

34. Տրանսպորտային միջոցն ախտահանելու նպատակով, վարակված կենդանիներից ստացված գոմաղբի և թոչնաղբի տեղափոխումից հետո թափքը ենթարկվում է մեխանիկական մաքրման տաք լվացվող լուծույթով կամ տաք ջրով և ախտահանվում է 2,5 տոկոս ակտիվ քլոր պարունակող պարզեցված սպիտակեցնող լուծույթով:

35. Վարակազերծման եղանակի ընտրությունը կատարվում է անասնաբուժության ոլորտի լիազոր մարմնի հանձնարարականով՝ հաշվի առնելով համաճարակաբանական իրավիճակը, հիվանդության հարուցչի տեսակը, քիմիական և տեխնիկական միջոցների հասանելիությունը:

36. Ակտիվ կենսաջերմային պրոցեսներ, ինչպես նաև 40°C-ից բարձր ջերմաստիճանային պայմաններ սպահովելու անհնարինության դեպքում, վարակազերծման նպատակով գոմաղբը, թոչնաղբը պահպանվում են՝

- 1) վարակի վեգետատիվ հարուցիչներով ախտահարվածության դեպքում՝ 12 ամիս.
- 2) տուրերկուլոզի դեպքում՝ մինչև 2 տարի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ